26.429

Գինն է 10 կոպ.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱԹՆԱ—ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՅՈՒՂ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

334.63
Հ-24

ԿԱԹՆԱ—ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

26429
05.06.2013
334.63
З-24
15 IAN 2010

ԿԱՆՈՆԱԴՐ. ՕՐԻՆԱԿԵԼԻ

Համաձայնեցված է Հայաստանի Գյուղկոոպի Միությունների Միության հետ։

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղական Կաթնա-Անասնապահական արտադրական Գյուղկոոպերատիվ Ընկերություն

## I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ գործող օրենքների հիման վրա ներկա կանոնադրությամբ հիմնվում է ..........................................

Գյուղական կաթնա-անասնապահական արտադրական գյուղկոոպերատիվ ընկերություն

2. Ընկերությունը գործում է ..........................

Գավառի .......................................... շրջանի

.......................... Գյուղում (գյուղերում).

Ընկերության վարչությունը գտնվում է

..........................................

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиот...
14782 1/57

3. Ընկերությունը նպատակ ունի իր գործու-
նեության շրջանում կիրառել արտադրական ձեռ-
նարկումներ, վորոնք ապահովելու յեն կաթնա-
անասնապահության և դրա հետ կապված այլ
ճյուղերի զարգացումը՝ գյուղացիական տըն-
տեսությունների բարձրացման, սոցիալիստա-
կան վերակառուցման արտադրական կոոպերաց-
կան վերակառուցման, արտադրական կոոպերաց-
կոնտրակտացիա, հողօգտագործման համայնացում
(հողաշինարարություն, արտաշինարարություն,
մելիորացիա, ցանքաշրջանառություն), ձեռնար-
կելու յե կերի հայթայթման, անասունների ազ-
նվացման, նրանց արտադրության քանակի և
վորակի բարձրացման, ինչպես և կազմակերպելու
յե իր անդամների անասնապահական մթերքների
վերամշակումն ու պլանային վաճառահանումը:
Վերոհիշյալ ձեռնարկումների իրականացման
համար մաքսիմալ չափով ներգրավելու յե կոոպե-
րացված բնակչության միջոցները և կուտակելու
յե համայնացված կապիտալներ:

Ընկերությունը նպատակ է դնում հնարավոր
աջակցություն ցույց տալու պետական մարմին-
ներին՝ ժողովրդական տնտեսության սոցիալիս-
տական վերակառուցման ձեռնարկումների իրա-
կանացման գործում:

4. Իր նպատակին հասնելու համար Ընկերու-
թյունը նախապես մշակված իր գործունեության
կազմ-արտադրական ծրագրի հիման վրա անց է
կացնում հետևյալ ձեռնարկումները.—

ա. Անցկացնել անասունների մետիզացիա ցե-



ղական և ազնվացված արտադրողներով, ձգտելով
կազմակերպելու մատղաշների կոլեկտիվ խնամք,

բ. Կազմակերպում է ամբողջ անասունների
կամ դրանց առանձին տեսակների (վոչխար, խոզ
և այլն) պահպանում՝ հասարակական և համայ-
նական անասնաբակերում, գոմերում, խոզանոց-
ներում և այլն.

գ. Կազմակերպում է կոնտրոլ հսկողություն,
ինչպես կոլեկտիվ գոմերում, նույնպես և իր
անդամների անհատական տնտեսություններում՝
անասուններին լավ պահպանելու և կերակրելու,
ճիշտ ձևով խնամելու, ինչպես և դրանց ապահո-
վագրելու համար.

դ. Հրավիրում է մասնագետ անասնաբուժներ.

յե. Կազմակերպում է կոոպերատիվ և կոլեկտիվ
բեղմնակայաններ և միջոցների յե դիմում հա-
սարակ արտադրողները փոխարինել ազնվացեղ
կամ տեղական ազնվացված արտադրողներով,
ինչպես և տանում է անասունների տոհմական
ցեղական գրանցում:

զ. Աջակցում է իր անդամների և շրջակա բնակ-
չության մեջ տարածելու գյուղատնտեսական,
գյուղական տնտեսությունների կոլեկտիվացման
և կոոպերացման վերաբերյալ գիտելիքներ՝ հա-
սարակական ընթերցումներ, դասախոսություն-
ներ, զրույցներ, գյուղատնտեսական կոոպերատիվ
խմբակներ, գրադարաններ, ցուցահանդեսներ,
մրցանակաբաշխումներ և անասունների ցուցա-
դրումներ և այլն կազմակերպելու միջոցով, հրա-
վիրում է արտադրական խորհրդակցություններ,

ոչխարաբուծական մրցումներ, հրավիրելով այլ կաթնա-անասնապահական ընկերություններին, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններին:

է. Մատակարարում է իր անդամներին անասուններ, կեր, ինվենտար, բուժագործիքներ և այլ առարկաներ ու պիտույքներ, վորոնք անհրաժեշտ են անասնապահությունը ռացիոնալ տանելու համար.

ը. Արտադրական նպատակների և ձեռնարկումների համար ստանում է վարկեր և այդ վարկերը օգտագործում է առաջին հերթին կազմակերպելու անասնապահության բնագավառում համայնացված և կոոպերատիվ ձեռնարկություններ ու հնարին չափ այդ ձեռնարկումների շուրջը և դրանց իրականացման համար մոբիլիզացիայի յե յենթարկում կոոպերացված բնակչության միջոցները,— վորպես հատուկ դրամագլուխներ, ավանդներ, կանխավճարներ ևայլն, ձգտելով գյուղական արտադրական ընկերությունը վերածելու կոլեկտիվ տնտեսության.

թ. Կիրառում է իր գործունեության շրջանում կերի արտադրության բարձրացման, լավացման և համայնացման ձեռնարկումներ՝ ցանքաշրջանառության սիստեմ մտցնելու և ընդարձակելու, ինչպես և կոոպերատիվ ու կոլեկտիվ սիլոսի կառուցումներ կազմակերպելու, արմատապտուղներ մշակելու, խոտհարներն ու արոտավայրերը լավացնելու և այլ միջոցներով.

ժ. Միջոցներ է ձեռք առնում հողաշինարա-



րության և իր անդամների հողամասերի համայնացման համար, նպատակ ունենալով այդ հողամասերն ընկերության անդամների միասնական կոլեկտիվ աշխատանքով մշակելու.

ժա. Կապալով է վերցնում պետական հողամասեր՝ դրանցում, առաջին հերթին, խոտաբույսերի և արմատապտուղների համայնական ցանքսեր կազմակերպելու, ինչպես և կապալով վերցված հողամասերը կոոպերատիվ և կոլեկտիվ հոտերն արածացնելու համար օգտագործելու նպատակով:

ժբ. Կազմակերպում է ճիշտ ցանքաշրջանառություն, ինչպես ընկերության, նույնպես և ընկերության անդամների հողերում, մտցնելով գյուղատնտեսական մեքենաների և իր անդամների այլ գյուղգործիքների և թե նրանց (անդամների) կոլեկտիվ աշխատանքի միասնական օգտագործում:

ժգ. Կազմակերպում է ագրո և զոոտեխնիկական ու անասնաբուժական մինիմումի անցկացման ձեռնարկումներ.

ժդ. Իր վրա յե վերցնում իր անդամների կամ ամբողջ գյուղի տնտեսությունների անասնապահական մթերքների, կերի և անասունների արտադրության ու վաճառահանման կոնտրակտացիոն պարտավորությունները,—համաձայն կաթնա-անասնապահական կոոպերացիայի սիստեմում սահմանված կանոնների.

ժե. Իր գործունեյության սահմաններում բատրակ և չքավոր տնտեսություններին ցույց է տալիս և կազմակերպում է արտադրական օժան-

օգնություն, մասնավորապես «չքավորական և բատրակային ֆոնդերը» օգտագործելու միջոցով, ինչպես և սահմանում է նրանց տնտեսական սպասարկման արտոնյալ պայմաններ:

ժգ. Ընկերություն գործունեության հետ կապված հարցերի առթիվ վորպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան հիմնարկներում և ձեռնարկություններում:

5: Նույն կարգով եվ (կետ 4) Ընկերությունը սպասարկում է նաև գյուղատնտեսության այլ ճյուղերին (բացի կաթնա-անասնապահական), վորքանով այդ ճյուղերը չեն սպասարկվում հատուկ արտադրական ընկերությունների կողմից:

6. Վերոհիշյալ ձեռնարկումները պետք է կիրառվեն այնպես, վորպեսզի դրանով ապահովվի—

ա. Անասնապահական տնտեսության կոլեկտիվացման աճումը.

բ. Ընկերության դրամագլուխների գոյացումն ու կուտակումն՝ ի հաշիվ Ընկերության անդամների միջոցների ներգրավման.

գ. Չքավորության և բատրակներին առաջին հերթին ու արտոնյալ սպասարկելը և արտադրական օժանդակություն ցույց տալը.

դ. Գյուղի չքավոր-բատրակային և միջակ խավերի կազմակերպումը՝ կուլակային շահագործման դեմ պայքարելու համար և սոցիալիստական հիմունքներով գյուղատնտեսության վերակառուցումն ապահովող ձեռնարկումներով վերացնելու կուլակության դիմադրությունը:



7. Ընկերությունն օգտվում է իրավաբանական անձի բոլոր իրավունքներով և կարող է ձեռք բերել, ստանալ ու օտարացնել բոլոր տեսակի գույքեր, պարտավորություններ, և պայմանագրեր կնքել, մուրհակներ տալ և ընդունել, շենքեր կառուցել, հայց հարուցել ու պատասխանել դատարանի առաջ և այլն:

8. Ընկերությունն անդամագրվում է շրջանային վաճառահանման-արտադրական կաթնա-անասնապահական միության, վորին նա պարտավոր է սահմանված ձևով հաշվետվություններ ներկայացնել և հանձնել իր անդամների արտադրանքը: Բացի դրանից, Ընկ-նը անդամագրվում է շրջանային Վարկային Ընկերության և իրավունք ունի անդամագրվել նաև այլ կոոպերատիվ և հասարակական միություններին, վորոնց նպատակները համապատասխանում են Ընկերության նպատակներին:

9. Ընկերությունն իր պարտավորությունների հանդեպ պատասխանատու յե իր ամբողջ գույքով: Ընկերության լուծարքման և վարկատուներին բավարարելու համար նրա միջոցների անբավարարության դեպքում, Ընկերության անդամները նրա պարտավորությունների հանդեպ կրում են լրացուցիչ պատասխանատվություն՝ համաձայն ներկա կանոնադրության 15-րդ հոդվածի:

10. Ընկերությունն ունենում է իր անվան կնիքը:

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ընկերության անդամ կարող են լինել 16 տարեկան հասած բոլոր քաղաքացիները, որոնք Ընկերության գործունեության շրջանում պարապում են գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված արհեստով:

Ծանոթություն.— Գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիներ ասելով հասկանում ենք այն քաղաքացիները, որոնք տղերն վարում են գյուղատնտեսություն կամ մասնակցում են վարելուն, և կամ կապված են դրան արհեստով, ինչպես և նրանց կազմակերպության մեջ մտնողները: Ընկերության անդամ չեն կարող լինել առևտրական ձեռնարկություն ունեցող անձինք, ինչպես և նրանք, որոնք անդամ են միանման գյուղատնտեսական ընկերության:

12. Նոր անդամների ընդունելությունը կատարվում է Ընկերության անդամների Ընդհանուր ժողովի կողմից, ինչպես և անդամների Ընդհանուր ժողովի լիազորությամբ Ընկերության Վարչության կողմից, ըստ որում ընդունումը հաստատում է Ընդհանուր ժողովը:

13. Ընկերության մեջ մտնել ցանկացող յուրաքանչյուր քաղաքացի պետք է Ընկերության մեջ մտնելու մասին համապատասխան հայտարարություն ներկայացնի Ընկերության Վարչության և ստորագրություն տա այն առթիվ, որ նա կենթարկվի ներկա կանոնադրության պահանջներին և դրանց վրա հիմնված Ընկերության Վարչության որոշումներին, ինչպես և ներկա կանոնադրության 15-րդ կետով նախատեսված Ընկերության պարտավորությունների առթիվ լրացուցիչ պատասխանատվություն է վերցնում իր վրա:

14. Ընկերության մեջ մտնող յուրաքանչյուր քաղաքացին պարտավոր է վճարել մուտքի վճար՝ իրենից հասանելիք փայավճարի 10 %-ի չափով, և համաձայն ներկա կանոնադրության 27-րդ կետի փայավճար մուծի:

15. Ընկերության յուրաքանչյուր անդամը համաձայն կանոնադրության 9-րդ կետի լրացուցիչ պատասխանատվություն է կրում Ընկերության պարտավորությունների հանդեպ՝ իրենից հասանելիք փայավճարի տասնապատիկ չափով:

Ծանոթություն.— Ընկերության մեջ ընդունված նոր անդամները պատասխանատվություն են կրում նաև այն պարտավորությունների հանդեպ, որոնք առաջացել են նախ քան իրենց Ընկերության մեջ մտնելը:

16. Ընկերության բոլոր անդամները պետք է անձնական աշխատանքով մասնակցեն Ընկերության ընդհանուր աշխատանքներին, Ընդհանուր ժողովի կողմից սահմանված պայմաններով և

րենց գյուղատնտեսական ինվենտարը տրամադրեն Ընկերության օգտագործմանը։ Ընկերության Վարչության մուծեն սահմանված պարտավորեցուցիչ մուծումները, ինչպես և վաճառահանման նշանակված իրենց անասնապահական մթերքները հանձնեն Ընկերության,— համաձայն պետական կանոնավորող մարմինների կողմից սահմանված կանոնների և Ընդհանուր ժողովի կողմից վերադաս կոոպերատիվ մարմինների հետ կապված կոնտրակտացիոն պայմանագրերի, և ընդհանրապես ենթարկվեն Ընկերության վարչական մարմինների բոլոր որոշումներին ու կարգադրություններին, որոնք հիմնված են օրենքի և ներկա կանոնադրության վրա:

17. Ընկերության անդամներն իրենց անասունների բոլոր հիվանդությունների մասին պարտավոր են հայտնել Վարչության և, վարակիչ հիվանդություններ հայտնաբերվելու դեպքում պարտավոր են կատարել Վարչության բոլոր կարգադրությունները, որոնք նպատակ ունեն վերացնել վարակիչ հիվանդությունները: Նույն կարգով էլ Ընկերության անդամները պետք է նախապես հաղորդեն Վարչության իրենց մտադրության մասին՝ վաճառահանելու անասունները, հորթերը կամ անասնապահական այլ մթերքները՝ համաձայն կանոնադրության 16-րդ կետի:

18. Կանոնադրության կետերը և Ընկերության վարչական մարմինների օրինական որոշումները խախտելու դեպքում, Ընդհանուր ժողովը կարող է սահմանել տույժ, ներկայացնելով





այդպիսին Վարչության առանձին դեպքերում որոշելու դրամական կարգով,— անուղղելի անդամների տնտեսական սպասարկումը (միջոցներ և կեր տրամադրել, արտադրողներ հատկացնել) և այլն (կետ 9-րդ) ժամանակավորապես դադարեցնելու կամ վերջին հերթին փոխադրելու միջոցով: Ընկերության կանոնադրությունը չարունակաբար խախտող կամ Ընկերության վարչական մարմինների օրինական որոշումներն ու կարգադրությունները չկատարող կամ թե ի վնաս Ընկերության գործող Ընկերության անդամները կարող են Ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել Ընկերության անդամությունից: Բացի դրանից, Ընդհանուր ժողովը և Ընկերության Վարչությունը կարող են կանոնադրությունը և պայմանագիրը խախտողներին ենթարկել դատական պատասխանատվության և միջոցների դիմել այդպիսիների նկատմամբ հասարակական բոյկոտ կազմակերպելու և անցկացնելու: Հեռացված անդամը կարող է նորից վերընդունվել համաձայն Ընդհանուր ժողովի որոշման:

19. Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի.—

ա. Մասնակցել Ընդհանուր ժողովներին Ընկերության բոլոր գործերի որոշման առթիվ.

Ծանոթություն.— Խորհուրդների ընտրության ձայնից զրկված անձինք (կուլակներ և այլն) իրավունք չունեն քվեարկել նաև ընկերության անդամների Ընդհանուր ժողովում և չեն կարող Ընկերության հիմնադիր-

նեք լինել, ինչպես և չեն կարող Ընկերության վարչական ու հսկող մարմինների կամ լիազորներ ընտրել և ընտրվել: Նույն կարգով էլ այդ անձինք չեն կարող վարձու պաշտոններ (հաշվետարներ, բեղմնակայանի վարիչներ և այլն) ունենալ Ընկերությունում:

բ. Իրենց տնտեսական նպատակների համար օգտվել Ընկերության աջակցությամբ և արտադրական ոգնությամբ ու վարկով.

Ծանոթություն.— Կուլակային տնտեսություններին Ընկերությունը վոչ մի վարկ չի տրամադրում: Այլ տեսակի արտադրական ոգնություններ (արտադրողներ տրամադրել, կեր տալ և այլն) ցույց են տալիս միայն նման ոգնությամբ չքավոր և միջակ տնտեսությունների կարիքները բավարարելուց հետո:

20. Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավասու յե հեռանալ Ընկերությունից, այդ մասին նախապես գրավոր հայտարարություն տալով: Սեփական ցանկությամբ դուրս յեկածը կարող է նորից Ընկերության անդամ ընդունվել ընդհանուր հիմունքներով:

21. Ընկերությունից անդամների դուրս մնալու որը համարվում է՝ կամավոր կերպով հեռանալու դեպքում— այդ մասին հայտարարություն տալու որը մեռած անդամների համար— նրանց մահվան որը և կանոնադրության 18-րդ կետի կարգով հեռացվածների համար— նրանց հեռացման առթիվ ընդհանուր ժողովի կողմից կայացված վորոշման որը:



Դուրս մնացածների հետ հաշիվներ մաքրելու համար դուրս մնալու որը համարվում է այն հաշվետու տարվա վերջին որը, վորի ընթացքում տեղի յե ունեցել անդամի կամավոր հեռանալը, հեռացվելը կամ մահանալը:

22. Մահացած անդամի գույքային իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են նրա ժառանգներին:

23. Հեռացած, հեռացված, նույնպես և մահացած անդամի ժառանգներին, այն հաշվետու տարվա հաշվետվությունը հաստատվելուց 3 ամիս հետո, վորի ընթացքում դուրս է մնացել անդամը,— վերադարձվում են փայավճարները և հետ ստանալու պայմանով կատարված այլ մուծումները, պահելով դուրս մնացածին բաժին ընկնող վնասները:

Ծանոթություն.— Մուծումները տևական ձեռնարկումներին տրամադրված լինելու դեպքում (կառուցումներ, ցեղական արտադրողների գնում և այլն), դրանց վերադարձման ժամկետը կարող է յերկարացվել մինչև 3 տարի՝ անդամությունից դադարելուց հետո:

Դուրս յեկած անդամը կամ մեռած անդամի ժառանգը Ընկերության վորևե այլ գույքի վերաբերմամբ իրավունք չունի պահանջ առաջադրել:

Դուրս մնացած անդամի հետ հաշիվ տեսնելիս Ընկերությունը փակում է նրա բոլոր չվճարված պարտքերի հաշիվը Ընկերության: Հեռացած

կամ հեռացված անդամներին համայնացված հողամասերից համապատասխան հող է տրամադրվում միայն համայնացված տարածության ծայրամասերից, կամ այլ ֆոնդերից, վորպեսզի չխախտվեն համայնացված տնտեսության շահերը: Հողամաս տրամադրելու կարգը վորոշվում Հողային Օրենսգրքով:

Հեռացած կամ հեռացված անդամները պատասխանատու յեն Ընկերության պարտավորությունների հանդեպ մեկ տարի շարունակ՝ նրանց հեռանալուց կամ հեռացվելուց հետո:

24. Ընկերության դուրս մնացած այն անդամի համար, վորը հեռանալուց չի մարել իր պարտքերը,— Ընկերության պարտավորությունների հանդեպ նրանց ունեցած պատասխանատվության տարեկան ժամկետը հաշվվում է Ընկերությանն իրենց ունեցած պարտքը լրիվ կերպով մարելու օրից:

## III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

25. Ընկերության միջոցները կազմում են՝ անդամների կողմից մուծվող փայավճարներից (կետ 14 և 27), նրանց ավանդներից, փոխառություններից, տնտեսական գործառնություններից ստացված յեկամուտներից և այլ աղբյուրներից:

26. Ըկերությունն ունենում է հիմնական, պահեստի և հատուկ դրամագլուխներ: Հիմնական դրամագլուխը բաժանվում է մասերի՝ 1) անփո-



կան (անբաժանելի), վորի մեջ մտնում են անդամների մուտքի վճարները, զուտ օգուտից արվող մասնահանումները, նվիրատվությունները և այլ մուծումները, վորոնք Ընկերության անդամների Ընդհանուր Ժողովի վորոշմամբ կմտցվեն հիմնական դրամագլխի մեջ. 2) փայական,— ուր մտնում են անդամների փայավճարները և 3) փոխառու,— ուր մտնում են այլ հիմնարկություններից և ձեռնարկություններից վորպես հիմնական դրամագլուխ փոխառության կարգով ստացված գումարները:

27. Հիմնական դրամագլխի փայական մասը կազմվում է անդամների փայավճարներից, վորոնք սահմանվում են հետևյալ չափերով,— ա) բատրակների համար . . . ռուբլի, բ) գյուղմիասհարկից ազատված տնտեսությունների համար . . . . ռուբլի, գ) նորմայով հարկվող տնտեսությունների համար . . . . ռ. և դ) անհատական կարգով հարկվողների համար . . . . ռուբլի:

Ծանոթություն 1.— Կոոպերատիվի անդամ յեղած անձինք, վորոնք աշխատում են շրջանի համար հիմնական գյուղատնտեսության ճյուղում, ազատվում են փայավճարի մուծումից և վճարում են միայն մուտքի վճար՝ իրենցից հասանելիք փայավճարի 5 տոկոսի չափով:

Ծանոթություն 2.— Փայավճարների չափը սահմանվում է Ընդհանուր Ժողովի կողմից, բայց չի կարող պակաս լինել 5

ուրբլուց բատրակների համար, 10 ռ.— միասհարկից ազատված ընկերության անդամների համար, 25 ռ.— կոպարներով գյուղմիասհարկ վճարող ընկերության անդամների համար և 40 ռ.— անհատական կարգով հարկվող ընկ. անդամների համար։ Յեթե ընդհանուր ժողովն ավելի բարձր փայավճարներ սահմանի, ապա պիտի պահպանվի անդամների առանձին խմբերի փայավճարների միջև հիշված հարաբերությունը։

Ծանոթություն 3.— Գյուղական վորևէ ծխի անդամներից մեկը համաձայն 27-րդ կետի, փայավճարը մուծելու դեպքում, այդ ծխի մյուս անդամները, վորոնք ցանկանում ընկերության անդամ լինել,— ազատվում են փայավճարի մուծումից և ընկերության անդամագրվելու համար պարտավոր են միայն 14-րդ կետով սահմանված մուտքի վճար մուծել։

Ծանոթություն 4։— Մուտքի և փայական վճարների մուծման համար չքավոր տնտեսություններին տրվում է ժամանակ, վորը սահմանում է ընկերության Վարչությունը։

Ծանոթություն 5.— Ընկերության անդամին այս կամ այն սոցիալական խմբավորման միացնելու համար, ընկ. Վարչությունն առաջնորդվում է գյուղմիասհարկի վերաբերյալ հարկային մարմինների տվյալներով, ինչպես և տեղական կազմակերպությունների



(գյուղխորհուրդ, վոխոգկոմ և այլն) տված տեղեկանքներով։

28. Պահեստի դրամագլուխը կազմվում է ամեն տարի զուտ օգուտից արվող մասնահանումներից՝ վոչ պակաս 10 տոկոսի չափով և ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ այլ մուծումներից ու պահեստի դրամագլխի տոկոսներից։ Պահեստի դրամագլխին մասնահանումները կարող են դադարեցվել ընդհանուր ժողովի վորոշմամբ, յերբ պահեստի դրամագլուխը հավասարվի ընկերության բոլոր սեփական դրամագլուխների 20 տոկոսին, բացառությամբ փայական դրամագլխի։ Պահեստի դրամագլուխը պահվում և ծախսվում է հատուկ օրենքով սահմանված կարգով։

29. Հատուկ դրամագլուխները (ագրոֆոնդ, «չքավորության և բատրակության կոոպերացման ու կոլեկտիվացման ֆոնդ», կուլտֆոնդ և այլն) կազմվում են ընկերության օգուտներից արվող մասնահանումների ճանապարհով, ընկերության անդամների կողմից տրված անվերադարձ մուծումներից, հատուկ դրամագլխին արվող փոխատվություններից և այլ մուտքերից, վորոնք գոյանում են ընդհանուր ժողովի վորոշմամբ։ Ընկերության առանձին անդամի կողմից հատուկ դրամագլխին արվող մուծումը չպետք է գերազանցի . . . :

30. «Չքավորության և բատրակության կոոպերացման ու կոլեկտիվացման ֆոնդը», վորը կազմվում է յուրաքանչյուր տարի անպայմանորեն ընկերության օգուտներից վոչ պակաս 15 տոկո-



641
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան ... Публичная Библиотека
14782-57

ռի չափով արվող մասնահանումներից և այլ մուտքերից,— պետք է բացառապես ծախսվի բատրակության և չքավոր տնտեսություններին փոխատվություն տալու՝ նրանց կոոպերացման ու կոլեկտիվացման դեպքում իրենց փայավճարները ու մուտքի վճարները մուծելու համար: Այդ ֆոնդի վոչ պակաս 50 տոկոսը ծախսվում է կոլեկտիվացման միջոցին բատրակների և չքավոր տնտեսությունների կոոպերացման համար:

31. Հատուկ դրամագլուխների նպատակները, դրանց գոյացման միջոցները և ծախսելու կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից հաստատված առանձին կանոններով:

## IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

32. Ընկերության գործերի կառավարումը կատարվում է անդամների Ընդհանուր ժողովի և Վարչության կողմից:

Ծանոթություն.— Խոշոր Ընկերություններում, ուր անդամների թիվը հասնում է 300 և ավելի միավորների, Ընդհանուր ժողովի և շրջանային միության թույլտվությամբ կոչվում է պատգամավորական ժողովներ՝ համաձայն գոյություն ունեցող հրահանգների և կանոնադրությունների

Ընկերության գործունեության ներքին հսկողությունը պատկանում է Վերստուգիչ



Հանձնաժողովին: Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող մտնել խորհուրդների ընտրությունների ձայնից զրկվածները, ինչպես և ամուսինները ու իրար հետ մոտիկ ազգականները (հայրեր և վորդիներ, քույր և յեղբայրներ, պա- և վորդիներ, քույր և յեղբայրներ, պապեր և թոռներ, հորյեղբայր և ազգականներ):

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

33. Ընդհանուր ժողովը հանդիսանում է Ընկերության կառավարող գերագույն մարմինը: Ընդհանուր ժողովի լուծման յենթակա յեն հետևյալ հարցերը.—

ա. Ընկերության անդամներ ընդունելն ու հեռացնելը.

բ. Վարչության, Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների ու դրանց թեկնածուների, ինչպես և այն կոոպերատիվ կազմակերպությունների վարչական մարմիններում պատգամավորների ընտրությունը, վորոնց անդամ է Ընկերությունը.

գ. Խորհրդի, Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի համար հրահանգների քննումը և հաստատումը.

դ. Ընկերության գործունեության ծրագրերի քննումը և հաստատումը, մանավորապես, այն

գործառույթների սահմանումը, վորը պիտի կատարի Ընկերությունը, և դրանց համար միջոցների աղբյուրներ վորոշելը․

ե․ Հատուկ դրամագլուխների հիմնումը․

զ․ Ընկերության շրջանառու միջոցների համար փոխառությունների գումարների սահմանումը և հիմնական ու հատուկ դրամագլուխներին փոխառության հարցերի լուծումը․

է․ Ընկերության գործառնությունների վերաբերյալ կանոնների քննումը և հաստատումը․

ը․ Ընկերության գործառնությունների և կառավարելու նախահաշիվների հաստատումը, մասնավորապես վարչության անդամների վարձատրության սահմանումը․

թ․ Վարչության հաշվետվությունների քննումը և հաստատումը, ոգուտների բաշխումը և վնասները ծածկելու կարգի վորոշումը․

ժ․ Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի սխալ գործունեության վերաբերյալ տրված բողոքների, ինչպես և դրանց անդամներին ժամանակից առաջ պաշտոնից հեռացնելու և թույլ տրված սխալների ու անճիշտ գործունեության համար նրանց պատասխանատվության հարցերի քննումը․

ժա․ Կանոնադրության լրացման և փոփոխման, պատգամավորական ժողովներ հիմնելու և Ընկերությունը լուծարքման յենթարկելու հարցերի լուծումը․

ժբ․ Համայնացված հողամասերում և համայնացված անասնաբակերում, գոմերում և այլն



աշխատանքների կարգի սահմանումը, ինչպես և անդամների աշխատանքի վարձատրության կանոնների սահմանումը․

ժգ․ Այն բոլոր հարցերի լուծումը, վորոնք վեր են Վարչության լիազորությունից:

34․ Ընդհանուր ժողովները լինում են հերթական և արտակարգ: Հերթական ժողովները հրավիրվում են Վարչության կողմից վոչ շուտ տարին չորս անգամ: Արտակարգ ժողովները հրավիրում է Վարչությունն իր հայեցողությամբ կամ Խորհրդի, Վերստուգիչ Հանձնաժողովի կամ թե ընկերության անդամների ընդհանուր թվի մեկ տասներորդի պահանջով, ինչպես և վերադաս կոոպերատիվ մարմինների առաջարկությամբ:

35․ Յուրաքանչյուր Ընդհանուր ժողովի հրավիրման ժամանակի, վայրի, ինչպես և ժողովի առնվազն առաջ ........................ տեղեկացնել, ի
քննության յենթակա հարցերի մասին պետք է ընկերության անդամներին, նույնպես և շրջանային կաթնա–անասնապահական միության: Վերջինս կարող է Ընդհանուր ժողովի օրակարգի մեջ մտցնել նաև իր հարցերը, վորոնց քննումն Ընկերության շահերի տեսակետից նա անհրաժեշտ է համարում:

36․ Ընդհանուր ժողովն որինական է համարվում, յեթե ժողովին ներկա յեն անդամների ընդհանուր թվի կեսից վոչ պակաս: Ընդհանուր ժողովում հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ, անդամների բաց քվեարկու–

թյամբ, վորոնք ոգտվում են խորհուրդների ընտրական իրավունքով:

Ծանոթություն.— Կանոնադրության փոփոխման, Ընկերության տնտեսության յեկամուտների բաշխման, անդամներ հեռացնելու և Վարչության ու Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներին հետ կանչելու, ինչպես և Ընկերությունը լուծարքի յենթարկելու հարցերի լուծման համար անհրաժեշտ է ընկերության անդամների 2/3 մասի ներկայությունը և ներկա յեղած ընկ. անդամների ձայների 2/3 մասի վորոշումը:

37. Յեթե ժողովը չկայանա անհրաժեշտ քանակությամբ անդամներ ներկա չլինելու պատճառով, ապա յերկրորդ անգամ ժողովը հրավիրվում է վոչ շուտ, քան հաջորդ որը և վոչ ուշ յերկու շաբաթից: Յերկրորդ անգամ հրավիրված ժողովը համարվում է որինական, անկախ ընտրական իրավունքից վոչ-զրկված անդամների թվից: Սակայն 36-րդ կետի ծանոթության մեջ նշված հարցերի լուծումը ներկա դեպքում էլ որինական է համարվում, յեթե միայն ժողովին ներկա յեն հիշված ծանոթության մեջ ցույց տրված թվով Ընկերության անդամներ:

38. Ընդհանուր ժողովի համար կազմվում է արձանագրություն, վորը ստորագրում է ժողովի նախագահությունը:

39. Ընդհանուր ժողովի վորոշումները պարտավորացուցիչ են, ինչպես ժողովին ներկա, նույնպես և բացակա Ընկերության անդամների համար:



## Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

40. Վարչությունը հանդիսանում է Ընկերության գործադիր մարմինը: Վարչությունը գործում է համաձայն ներկա կանոնադրության և Ընդհանուր ժողովի վորոշումներով, և Ընկերության անունից, առանց այդ առթիվ առանձին լիազորության, բոլոր տեսակի հարաբերությունների մեջ է մտնում պետական հիմնարկությունների և այլ կազմակերպությունների ու անձանց հետ:

Մասնավորապես Վարչության վրա դրվում են հետևյալ պարտականությունները.—

ա. Ներկայացուցչություն՝ Ընկերության գործերով.

բ. Յելքի ու մուտքի նախահաշիվների և արտադրական ծրագրերի կազմելը և հաշվապահության ու հաշվետարության վարելը.

գ. Գույքերի և դրամական գումարների պահպանումը.

դ. Ընկերության անդամների ու դրանց ամեն մեկի փայավճարների և այլ մուծումների ցուցակների պահումը.

յե. Ընկերության գործունեության համար անհրաժեշտ միջոցների հայթայթումը և պարտքերի գանձումը.

զ. Ընկերության ընդհանուր գործերում անդամների կատարած աշխատանքների հաշվառումը և այդ աշխատանքների վարձատրումը.

է. Ընկերության արտադրական ձեռնարկում-

ների կազմակերպումը, ինչպես և Ընկերության անդամներին անասուններ, գործիքներ, կեր, սերմացու և այլն մատակարարելը.

ը. Գյուղատնտեսության կոնտրակտացիայի ենթարկված մթերքների վերամշակման և վաճառահանման կազմակերպումը.

թ. Բանվորներ և ծառայողներ վարձելն ու արձակելը և Ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվի սահմաններում դրանց վարձատրության նշանակելը.

ժ. Ընկերության գործերով լիազորագրեր, մուրհակներ և այլ պարտավորագրեր տալը.

ժա. Պայմանագրեր կնքելն ու մասնավորապես Ընկերության անունից կոնտրակտացիաներ կապելը և Ընդհանուր ժողովի կողմից սահմանված փոխառություններ կնքելը.

ժբ. Թե՛ Ընկերության պատկանող և թե՛ նրան հանձնարարված գույքի պահպանումը.

ժգ. Հանձնված գյուղատնտեսական մթերքների համար Ընկերության հասանելիք գումարների, վարկերի, ապրանքների ու նյութերի ստանալը և համաձայն Ընդհանուր ժողովի ցուցմունքների, դրանք Ընկերության անդամների միջև բաժանելը.

ժդ. Հերթական և արտակարգ Ընդհանուր ժողովներ հրավիրելը, և այն բոլոր պարտականությունները, որոնք նշված են ներկա կանոնադրության մեջ և որոնք բղխում են կանոնադրության և Ընդհանուր ժողովի որոշման էությունից.



41. Վարչությունն ընտրվում է Ընդհանուր ժողովում Ընկերության անդամների միջից, բաց քվեարկությամբ, մեկ տարի ժամանակով բաղկացած ........................................ անդամից և յերկու թեկնածուներից՝ Վարչության անդամների բացակայության կամ հեռանալու դեպքում նրանց փոխարինելու համար:

42. Վարչությունն ընտրում է նախագահ և պարտականությունները բաժանում է անդամների միջև. Վարչության անդամ-գանձապահը չի կարող միաժամանակ տանել հաշվետարի պարտականությունները:

43. Ընկերության պարտավորությունները, մուրհակները, անդորրագրերը և այլ դրամական փաստաթղթերը, ինչպես և Ընկերության անունից տրվող լիազորագրերն ու պայմանագրերը պետք է ստորագրվեն Վարչության նախագահի կամ նրա տեղակալի ու Վարչության մեկ անդամի և կամ այն անձի կողմից, որը նոտարական լիազորություն ունի Վարչությունից:

Ընդհանուր ժողովը կարող է Վարչության անդամներին վարձատրություն նշանակել՝ նրանց աշխատանքների համար:

44. Իրենց պարտականությունները խախտող Վարչության անդամներն Ընկերության հասցրած բոլոր վնասների համար պատասխանատու յեն իրենց ամբողջ գույքով համաձայն այս առթիվ գոյություն ունեցող որենքների (Կանոնադրություն Գյուղկոոպերացիայի մասին, հոդված 92):

45. Վարչության նիստերը հրավիրվում են

վոչ ուշ քան .................... անգամ և կայացած են համարվում, յեթե ներկա յեն Վարչության անդամների կեսից վոչ պակաս, նույն թվում և նախագահը կամ նրա տեղակալը: Վարչության նիստերում հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում, հարցը փոխադրվում է Վարչության հաջորդ նիստին կամ Ընդհանուր Ժողովին: Վարչության վորոշումները գրանցվում են արձանագրությունների գրքում և ստորագրվում են բոլոր ներկա յեղած անդամների կողմից:

46. Վարչությունը բացի տարեկան հաշվետվությունից պարտավոր է Ընկերության գործերի դրության վերաբերյալ նաև այլ հաշվետվություններ ներկայացնել Ընդհանուր Ժողովին՝ վերջինիս սահմանած ժամկետին, բայց վոչ ուշ մեկ անգամ յուրաքանչյուր յեռամսյակում: Ընկերության տարեկան հաշվետվությունը պետք է կազմված լինի գրավոր:

47. Վարչության գործունեության վերաբերյալ բողոքները տրվում են Վերստուգիչ Հանձնաժողովին, վորը Վարչության բացատրությունը լսելուց հետո բողոքը լուծում է միացյալ նիստում և կամ իր յեզրակացությամբ այդպիսին ներկայացնում է Ընդհանուր Ժողովին:

## Գ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

48. Ընկերության բոլոր անդամների հետ միասին գյուղատնտեսության բարձրացման և դրա սոցիալիստական վերակառուցման համար Ընկերության բոլոր հիմնական ձեռնարկումները



նախապես քննության առնելու, ինչպես և Ընկերության տնտեսությունն ավելի ռացիոնալ վարելու հարցերը միասին քննելու նպատակով, Վարչության կից կազմակերպվում է մշտապես գործող խորհրդակցական մի մարմին — Արտադրական Խորհրդակցություն:

Ընկերության Վարչությունը պարտավոր է նախապես Արտադրական Խորհրդակցության քննության հանձնել հետևյալ հարցերը.—

ա. Գյուղատնտեսական կամպանիայի ծրագրերը.

բ. Ընկերության կազմակերպչական-արտադրական ծրագրերը (բեղմնավորման կամպանիաներ, մեխիզացիայի ծրագրեր, կերի մթերման և կերամատակարարման ծրագրեր, սիլոսի կառուցումներ կազմակերպելը).

գ. Կոնտրակտացիայի ծրագրեր (տարեկան և յերկարատև).

դ. Կոնտրակտացիոն պայմանագրերի պայմանները.

յե. Հողաշինարարության և մելիորացիայի ծրագրերը՝ Ընկերության գործունեության շրջանում.

զ. Ընկերության մատակարարման աշխատանքների ծրագրերը.

է. Իր անդամների տնտեսությունների անասնապահական և այլ ճյուղերի կոլեկտիվացման ծրագրեր.

ը. Սոցիալիստական մրցման ծրագրերն ու պայմանները և այլ հիմնական ձեռնարկումները;

վորոնք զուգադիպում են Ընկերության նպատակներին և խնդիրներին։

Արտադրական Խորհրդակցության աշխատանքներին մասնակից են արվում Ընկերության բոլոր անդամները, առաջին հերթին ակտիվ անդամները՝ բատրակներից, չքավորներից, յերիտասարդներից և կանանցից, ինչպես և Ընկերության ձեռնարկություններում աշխատող վարձու ծառայողներն ու բանվորները։

Արտադրական Խորհրդակցությունները գումարվում են ինչպես իրենց՝ անդամների նախաձեռնությամբ, նույնպես և Ընկերության Վարչության հրավերով։

## Դ․ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ․

49․ Ընկերության Վարչության տնտեսական և կազմակերպչական գործունեությունն ստուգելու համար, Ընդհանուր Ժողովում ընտրվում է Վերստուգիչ Հանձնաժողով, բաղկացած 3 անդամից և 2 թեկնածուներից, մեկ տարի ժամանակով։ Հանձնաժողովն իրավունք ունի ստուգում կատարել ամեն ժամանակ իր ցանկությամբ և, բացի դրանից պարտավոր է ստուգում կատարել Ընկերության անդամների մեկ հինգերորդ մասի պահանջմամբ, ինչպես և վերադաս կոոպերատիվ կազմակերպությունների առաջարկությամբ։ Ընդհանուր ստուգում կատարվում է վոչ շուտ, քան տարին չորս անգամ։

50․ Վերստուգիչ Հանձնաժողովն իր յեզրա-



կացությունն է տալիս Վարչության հաշվետվության, ծրագրների, նախահաշիվների և այլ հարցերի վերաբերմամբ, վորոնք Վարչությունը ներկայացնում է Ընդհանուր Ժողովին։

Վերստուգիչ Հանձնաժողովն ստուգում է գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման, արտադրական կոոպերացման և կոլեկտիվացման, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու, կադրերի ընտրման և վերապատրաստման, սոցիալիստական մրցման, դրամագլուխների կուտակման, գյուղատնտեսական կամպանիա անցկացնելու և այլն վերաբերմամբ Վարչության կողմից տարվող աշխատանքները։ Իր գործունեության մասին Վերստուգիչ Հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում տարին յերկու անգամ։

## V․ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈԳՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՅԵՎ ՎՆԱՍՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

51․ Ընկերությունում անպայմանորեն տարվում են հաշվապահական գրքեր՝ համաձայն այս առթիվ վերադաս կոոպերատիվ միություններում գոյություն ունեցող կանոնների։

Ընկերության գործավարությունը և հաշվետարությունը կատարվում են .................... լեզվով։

52. Ընկերության գործառնական տարին համարվում է ........................................ 1-ից մինչև ........................................ 30-ը: Առաջին հաշվետու տարին հաշվվում է Ընկերության բացվելու օրից մինչև ........................................

53. Գործառնական տարին վերջանալուց ոչ ուշ, քան յերեք ամսից Վարչությունը պարտավոր է հրավիրել Ընդհանուր ժողով՝ Ընկերության գործունեյության տարեկան հաշվետվությունը լսելու համար. հիշված հաշվետվությունը պետք է ստորագրված լինի Վարչության կողմից և ոչ ուշ, քան 2 շաբաթ առաջ Ընդհանուր ժողով հրավիրելուց այդպիսին պետք է տրվի անդամներին քննելու և ծանոթանալու համար: Ներկա կանոնադրությամբ սահմանված ժամկետին Վարչության կողմից հաշվետվությունը կազմված չլինելու դեպքում, Վերստուգիչ Հանձնաժողովը պարտավոր է այդ մասին տեղեկացնել շրջանային միության:

54. Տարեկան հաշվետվությունը պետք է պարունակի իր մեջ՝ Ընկերության արտադրական գործունեյության տվյալները, մասնավորապես բալանսը, օգուտների և վնասների հաշիվը, մուտքը, յելքը և տարվա ընթացքում յեղած արտադրական շրջանառության մնացորդները (յուրաքանչյուր շրջանառության վերաբերյալ առանձին), տվյալներ՝ անդամների թվի փոփոխման և Ընկերության գործերի առթիվ անդամների վրա



ընկնող պատասխանատվության ընդհանուր գումարի մասին:

55. Հաշվետվությունը նախ քան Ընդհանուր ժողովի հաստատման ներկայացնելը, այդպիսին ստուգվում է Վերստուգիչ Հանձնաժողովի կողմից, վորը հաշվետվության մասին տալիս է իր յեզրակացությունը և զեկուցում Ընդհանուր ժողովին:

56. Ընկերության զուտ օգուտը համարվում է հաշվետու տարվա ընդհանուր յեկամուտի մնացորդը, դուրս յեկած այդ յեկամուտից Ընկերության կառավարման և գործառնությունների բոլոր ծախքերը, նույն թվում նաև կոոպերատիվ վերավճարները:

57. Տարեկան բալանսով դուրս բերված զուտ օգուտից Ընդհանուր ժողովը մասահանում է՝ վոչ պակաս 10 տոկոս պահեստի դրամագլխին, 50 տոկոս— հիմնական դրամագլխի անբաժանելի մասին, 15 տոկոս—«չքավորության և բատրակների կոոպերացման ու կոլեկտիվացման ֆոնդին» և 10 տոկոս— կուլտֆոնդին:

Օգուտի մնացած մասը Ընդհանուր ժողովի հայեցողությամբ տրամադրվում է.—

ա. Ընկերության այլ ֆոնդերի և դրամագլուխների կազմակերպման համար (ագրոֆոնդ և այլն).

բ. Ընկերության անդամների լրացուցիչ վարձատրման համար.

գ. Այլ կոոպերատիվ հանրօգուտ նպատակների.

58. Գործառնական տարվա վերջում առաջացած վնասը ծածկվում է պահեստի դրամագլխից: Եթե այդ ճանապարհով վնասը չի ծածկվում, ապա Ընդհանուր ժողովն իրավունք ունի պակասած գումարը բաժանել ընկերության անդամների վրա՝ նրանց լրացուցիչ պատասխանատվության սահմաններում (կետ 15), և ժամանակ նշանակել, վոչ ուշ մինչև տարվա վերջը յուրաքանչյուրն իր բաժինը վճարելու համար: Վորևէ մեկի կողմից իր բաժինը չվճարելու դեպքում, վարչությունը կարող է չվճարված գումարը գանձել դատարանով կամ հիշված անդամի փայավճարըփոխանցել վերոհիշյալ բաժանումով նրան հասանելիք գումարի դիմաց:

Վարչության անդամի սխալ գործնեության կամ թերությունների հետևանքով հասած վնասը ծածկվում է հանցավորի կողմից, իսկ նրանցից ստացված գումարը հատկացվում է դրամագլուխների լրացման համար, վորոնցից դուրս է գրված վնասը և կամ վերադարձվում է ընկերության անդամներին, վորոնք իրենց մուծումներով ծածկել են վնասը:

## VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

59. Ընկերությունը դադարեցնում է իր գործնեությունը և լուծարքվում է գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ գործող օրենքների սահմանած կարգով:



## VII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

60. Կանոնադրության մեջ փոփոխություն մտցնելու կամ լրացնելու իրավունքը պատկանում է Ընդհանուր ժողովին՝ վերադաս կոոպերատիվ կազմակերպությունների հաստատումով, և օրինական ուժ են ստանում կանոնադրության փոփոխումները պավառային Հողբաժնում գրանցելուց հետո միայն:

# ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

## ԿԱԹՆԱ-ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՆ

*Ընդունելով ներկա օրինակելի կանոնադրությունը, հիմնադիրները պետք է նախ քան այդպիսին գրանցման հանձնելը, լրացնեն դրա մեջ յեղած բոլոր բաց տեղերը․*

*1․ Վերնագրում պետք է գրել Ընկերության անունը․ օրինակ «Կանոնադրություն Ստեփանավանի կաթնա—անասնապահական գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվ Ընկերության»։*

*Յեթե հիմնադիրներն իրենց ժողովում կվորոշեն այդպիսի անվանման ավելացնել նաև մի այլ անուն, օրինակ «Շահումյան», ապա այդ անունը պիտի գրվի վերնագրում «Ստեփանավանի» բառից հետո։ Այսպիսով վերնագիրը կլինի հետևյալը՝ «Կանոնադրություն Ստեփանավանի «Շահումյան» կաթնա—անասնապահական գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվ Ընկերության»։*

*2․ Առաջին հոդվածի վերջում ազատ տեղում, «հիմնվում է» բառից հետո գրվում է այն, ինչ գրված է լինում կանոնադրության վերնագրում։*

*Ընկերությունը գոծում է» բառերից հետո գրվում է այն գյուղական վայրի (կամ վայրերի) անունը, ուր գործում է Ընկերությունը՝ ցույց տալով վարչական շրջանը կամ գավառը։*

Օրինակ.—«ընկերությունը գործում է Լոռվա գավառի Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղում»:

Նույն հոդվածում «ընկերության վարչությունը գտնվում է» բառից հետո պետք է գրել այն գյուղի անունը, որ գտնվելու է Ընկ. Վարչությունը:

Օրինակ. «ընկերության վարչությունը գտնվում է Ուռուտ գյուղում»:

3. Այնուհետև 29-րդ կետի վերջում ցույց տալ այն գումարը, վորով հիմնադիրների ժողովը սահմանափակում է հիմնական դրամագլխին յուրաքանչյուր անդամի կողմից պարտավորեցուցիչ կարգով մուծվելիք գումարը:

4. Յեթե հիմնադիրների ժողովը որևէ փոփոխություն մտցնի Կանոնադրության մեջ, ապա պետք է փոփոխվող բառերը ջնջել և դրանց փոխարեն վերևից նոր տող գրել: Փոփոխումները պետք է համաձայնեցվեն գործող օրենքներին (Գյուղկոոպերացիայի վերաբերյալ օրենքները, Հողային օրենքը և Համաքաղաքացիական օրենք):

Կանոնադրության մեջ բոլոր ջնջվածների և վերևում գրված տողերի մասին պետք է համապատասխան ծանոթություն գրվի կանոնադրության վերջում, հիմնադիրների ստորագրություններից առաջ:



## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հարկավոր է լրացնել կանոնադրության դատարկ տեղերը և վերջում հիշատակել կանոնադրության արտագրված բնագրում մտցված փոփոխությունները յերեք օրինակների մեջ էլ:

Կանոնադրության յերեք օրինակներն էլ պետք է ստորագրված լինեն վոչ պակաս հինգ հիմնադիրների կողմից: Բոլոր օրինակներում էլ պետք է լինեն միևնույն ստորագրությունները:

Ստորագրողները պետք է լրիվ կերպով գրեն իրենց անունը, ազգանունը և հայրանունը:

Նույն ստորագրությունները պետք է լինեն նաև կանոնադրության գրանցման մասին հայտարարության վրա, վորը ներկայացվում է գավառային հողային բաժնին: Ստորագրությունները պետք է վավերացվեն գյուղխորհրդի կամ շրջգործկոմի կողմից:

Գրանցման մասին հայտարարությանը պետք է կցել—ա) հիմնադիրների ցուցակը, վորը պետք է ստորագրված լինի նրանց կողմից, բ) յերեք օրինակ իրար համապատասխանող կանոնադրություն, ստորագրված վոչ պակաս հինգ հիմնադիրների կողմից և գ) շրջանային գործկոմի կողմից վավերացված տեղեկանք այն մասին, վոր հիմնադիրները զրկված չեն խորհուրդների ընտրական իրավունքից և գ) գյուղխորհրդի կամ շրջգործկոմի տեղեկանքը՝ հիմնադիրների միջև ազգակցական կապի մասին: Օրենքով Ընկերության կազմակերպելու համար պահանջվում է

վոչ պակաս 10 հիմնադիրներ այնպիսի անձանցից, վորոնք զրկված չեն խորհուրդների ընտրական ձայնի իրավունքից և իրար միջև ամուսնական կամ ազգակցական կապեր չունեն: Յեթե հիմնադիրների մեջ կան այնպիսի անձինք, վորոնք ամուսնական կապ ունեն, ինչպես և հայրեր ու վորդիներ, քույրեր ու յեղբայրներ, պապեր ու թոռներ, ապա դրանցից միայն մեկն է համարվում հիմնադիրների մեջ:

Կանոնադրության գրանցման մասին հայտարարության մեջ պետք է ցույց տալ այն անձը, վորին հիմնադիրները լիազորում են գրանցման վերաբերյալ գործերը վարելու և համապատասխան գրությունն ստանալու, և հաղորդվում է այդ անձի հասցեն. այդ լիազորությունը կարելի յե տալ նաև այնպիսի անձի, վորը չի մտնում հիմնադիրների կազմի մեջ:

Գրանցման մերժումը կարող է լինել միայն այն դեպքում, յեթե ներկայացված կանոնադրությունը չհամապատասխանի գործող որենքների պահանջներին:

Գրանցումը մերժելու մասին հիմնադիրները տեղեկացվում են՝ համապատասխան հողային մարմնի վորոշման պատճեն նրանց ուղարկելու միջոցով, ցույց տալով որենքի խախտված կետերը:

Հիմնադիրներն այդ վորոշման դեմ կարող են բողոքել մեկ ամսվա ընթացքում՝ վորոշման պատճեն ստանալու որից:

Բողոքը տրվում է այն հողային մարմնի միջո-



ցով, վորը կանոնադրությանը գրանցելը մերժելու մասին վորոշում է կայացրել. գավառային Հողբաժնի վորոշման դեմ կարելի յե բողոքել Հողժողկոմատի Հողային վարչության:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

**Լենինականի Գավառային Հողբաժնին**

Հաջի-Խալիլի «Մյասնիկյան» կաթնա-անասնապահական արտադրական գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերության հիմնադիրներ՝ Հաջի-Խալիլ գյուղացիներ 1. Գրիգոր Ստեփանի Վարդանյանից, 2. Հովսեփ Մկրտչի Ստեփանյանից, 3. Արմենակ Գրիգորի Ազատյանից, 4. Հայկանուշ Նահապետի Վարդանյանից և 5. Հովհաննես Արմենակի Կարապետյանից։

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սրա հետ միասին ներկայացնելով Հաջի-Խալիլի «Մյասնիկյան» կաթնա-անասնապահական արտադրական գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերության կանոնադրությունը յերեք օրինակից, հիմնադիրների ցուցակը՝ և Հաջի-Խալիլի շրջգործկոմի հաստատումը, վոր նրանք խորհուրդների ընտրության ձայնի իրավունք ունեն և վոր ամուսնական ու ազգակցական կապեր չունեն, խնդրում ենք ներկա կանոնադրությունը գրանցել գյուղատնտեսական կոոպերատիվ միությունների մատյանում։

Ներկա հայտարարությունը հանձնելու և գրանցված կանոնադրությունն ստանալու համար լիազորում ենք գյուղատնտես Հակոբ Սարգսի Վապանյանին, վորն ապրում է . . . . . . . . . վորի հասցեյով խնդրում ենք ուղարկել բոլոր գրությունները՝ մեզ համար։



Առդիր.— յերեք օրինակ կանոնադրություն և հիմնադիրների ցուցակը՝ շրջգործկոմի վավերացումով։

Ընկերության հիմնադիրներ (ստորագրություններ)

Վերոհիշյալ Հաջի-Խալիլ գյուղի բնակիչներ՝ Գ. Ս. Վարդանյանի, Հ. Մ. Ստեփանյանի, Ա. Գ. Ազատյանի, Հ. Ն. Վարդանյանի և Հ. Ա. Կարապետյանի ստորագրությունները Հաջի-Խալիլի գյուղխորհուրդը հաստատում է կնիքով և ստորագրությամբ։

Ստորագրություններ

## ՑՈՒՑԱԿԻ ՁԵՎԸ

Ցուցակ Լենինականի գավառի Հաջի-Խալիլի գանտեսական արտադրական կոոպերատիվ ընկերության հիմնադիրների

| Անուն, հայրանուն և ազգանուն | Բնակավայրը | Ինչով է պարապում | Ստորագրություն |
|---|---|---|---|
| | | | |

Հաջի-Ցալիլի չըջգործկոմը հաստատում է, որ վերևում ստորագրող քաղաքացիները խորհուրդների ընտրության ձայնի իրավունք ունեն և որ իրար հետ ամուսնական ու ազգակցական կապեր չունեն (ծնողներ և որդիներ, քույր և յեղբայրներ, պապեր ու թոռներ)։

Ստորագրություններ.

Կ. տ.

Հայպոլիգրաֆի տպ. պատ. № 758

Գրաավտ. № 2929 (բ) Տիրաժ 1000

ՀՀ Ազգային գրադարան
NL0209247